

Կար մի ժամանակ, որ Էջմիածնի եւ Հայրապետի նուիրակ-
ները աշխարհի ամենայն կողմեր շրջելով՝ ամենին լսելի էին կա-
ղուցանում՝ այն ինչ որ հարկաւորն էր. չար բաղդով վաղուց
արդէն զազարել է նուիրակութիւնը:

Կար մի ժամանակ որ Էջմիածնի Միաբանութիւնը եկեղեցա-
կան թափօր կազմած վանքի արտաքին պարսպից ուխտաւորնե-
րի տհազին բաղմութեանը առաջնորդել է գէպի Մայր Տաճարը.
ուխտաւորների բաղմութիւնը սրտատրոփ եւ հոգեզմայլ ցնծու-
թեամբ ղանգակների որոտմամբ եւ «Էջմիածինն ի հօրէ» շարա-
կանի հնչմամբ մտել է մայր տաճարը համբուրել է Ս. Իջման
տեղը, Ս. Լուսաւորչի աջը եւ այլ սրբութիւնները. եւ շարթօր-
եայ ժամանակով մնալով Ս. Էջմիածնում, ուսումնասիրել է իւր
մայր Աթոռի փիճակը, ծանօթացել է վանականների հետ. մինը
սկսել է իւր քաղաքի համար առաջնորդացու անձն որոնել.
միւսը՝ հոգեւոր հովիւ ուրիշը՝ նուիրակ եւին. եւին: Նահապե-
տական պարզութիւնը հայրապետին եւ իւր ժողովրդին ներքին
եւ սուրբ կապով կապելով, առանց խտրութեան ժամերով խօ-
սակից, սեղանակից եւ խորհրդակից է արել իրար, երկու կող-
մից էլ հասկացել են միմեանց ցաւերը եւ դարման տանելու հա-
մար խորհրդածել, Անցել են այդ ժամանակները:

Արարատի խմբագրութեան մնումէ ցանկանալ որ ժողովուր-
դը իւր Մայր Աթոռի հետ կապուած լինի որդիական սիրով.
ինչ որ հին ժամանակը գործվումէր նահապետական պարզու-
թեամբ՝ այժմ՝ երանի թէ կատարուէր գիտակցաբար:

ՀԱՅ ԲՈՂԱՔԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԵՒ

ԱՄԵՐԻԿԱՆ ՄԻՍԻՑՆԱՐԷ*)

Ահաւասիկ այս տարի ևս տեղի կունենայ Ամերիկեան Միսիօնարաց
տարեկան ժողովն յԱմերիկեան խան. ինչպէս արդէն յայտնի է այս
տարի արտաքոյ կարգի պիտի լինի Միսիօնարաց տարեկան ժողովն:

(*) Այս յօդուածը՝ որ տպուած է սիւէրճէմանը Էֆքիտրոս լրագրի Մայիսի 13 եւ 14
ին հրատարակուած համարներում, խմբագրութիւնս արժան համարեց արտատպել
Արարատայ մէջ

լստ որում Հայ—բողոքական հասարակութեան և Միսիօնարաց մէջ տեղի ունեցած գծաութեանց և գծուարութեանց խնդիրը արձագանք գտած է Ամերիկայի ժողովրդեան առջև. և այս տարի Ամերիկայէն յատուկ յանձնաժողով մը ինչպէս նաև Պօրտ ընկերութեան արտաքին գործոց ընդհանուր տեսուչ Արթ. Տօզմէօր Բլաքը Կ. Պօլիս կգան Միսիօնարաց տարեկան ժողովին ներկայ գտնուելու, և Հայ—բողոքական հասարակութեան և Միսիօնարաց միջև եղած գծաութեանց և գծուարութեանց կէտերը քննելու և կարգադրելու համար, Թէ արդեօք ի՞նչ պիտի լինի այս դարձուածոց հետեանքը, յօգուտ Հայ—բողոքական հասարակութեան պիտի լինին թէ ի վնաս նոցա, գծուար չէ այժմէն նշմարել խնդրոց քաջ տեղեակ եղող անձի մը, Բայց այս դարձուածոց հետեանաց ինչ ըլլալիքը ըսելէ առաջ հարկ է գաղափար մը ունենալ Հայ—բողոքական հասարակութեան և Միսիօնարաց արդի կացութեան վրայ, նոյն ժամայն դիւրին կը լինի այժմէն գտնել այս դարձուածոց ինչ ըլլալիքը:

Կրնանք ըսել թէ Հայ—բողոքական հասարակութեան արդի վիճակը ամենէն թշուառը և խղճալին է բաղդատմամբ Թուրքիոյ միւս քրիստոնեայ հասարակութեանց. ասոնց եկեղեցիները և դպրոցները մեծաւ մասամբ Միսիօնարներէն կախում ունին, և տարիէ հետէ Միսիօնարաց ձեռքով իրենց մայրական եկեղեցիէն բաժնուած լինելով՝ նոցա հետ քաղաքական կամ կրօնական որ և է յարաբերութիւն չունին, այս ժողովուրդ 10—15,000 էն աւելի չէ, և ամբողջ Թուրքիոյ մէջ այլ և այլ գիւղերու և քաղաքներու մէջ ցրուեալ են. իրենց հովիւները և քարոզիչները Միսիօնարներէն ամսական կառնուեն, և նոցա իշխանութեան տակ են, թէև երբեմն տեղացիք ևս մաս մը կօղնեն քարոզչին ամսականին. Ինչպէս որ ըսինք ասոնք ամբողջ Թուրքիոյ մէջ ցրուեալ են. ամեն քաղաքի և գիւղի մէջ մէն մի քիչ կը գտնուին, և ասոնց համար քարոզիչ մը կամ հովիւ մը սահմանած են Միսիօնարք, ժողովուրդ կամ եկեղեցի չկայ որ երբեմն իրենց հովուաց կամ քարոզչաց հետ և միշտ Միսիօնարաց հետ ծանր գծաութիւններ և կռիւներ ունեցած չըլլան. երբ Միսիօնարք իրենց խելքին կամ հաճոյքին համեմատ փոփոխութիւն մը ընել ուզեն՝ և ժողովուրդը հաճութիւն չի տայ, Միսիօնարք իսկոյն քարոզչին կարգիլեն քարոզելէ և քեթիկէ դպրոց մը ունին կը դադրեցնեն ուսուցանելէ այլաբանական պատճառներով, և շատ անգամ տեղացի հովիւք կամ քարոզիչք Միսիօնարաց կողմը կը բռնեն, քանզի եթէ այսպէս չընեն անմիջապէս իրենք ևս կը զրկուին ամսականէ և թշուառութեան և աղքատութեան կը դատապարտուին. ասկէ կը հետեին շատ անգամ ծանր կռիւներ ժողովրդեան, քարոզչին և Միսիօնարաց միջև, բայց որչափ որ այս կռիւները շարունակած են՝ գժբաղդաբար միշտ խելճ հասարակութիւնն եղած է տուժողը, և իրենց գծուարութիւնքն ա-

եկցած են, քանզի Միսիօնարք ինչ որ ալ լինի, երբէք իրենց ընթացքէն չեն շեղեր, թէև իրենք ալ գիտնան թէ մեծ սխալմունք է իրենց բրածը, Բայց Հայ—բողոքական հասարակութեան աւելի խղճալի ուրիշ կէտ մը կայ, այն է՝ նոցա կրօնական գլուխներէն իզատ Ազգապետներն անգամ Միսիօնարաց ազդեցութեան ներքև լինիլը, այսօր Կ. Պօլսոյ բողոքականաց Ազգապետը Միսիօնարաց մի լոկ վարձկանն է, և կարծես նոցա փաստաբան մը՝ նոցա վնասակար գործերը արգարացնող, որն որ անուղղակի միջոցաւ մեծ պարգևներ կընդունի Միսիօնարներէն, բայց արդէն հասարակութիւնը կը կեղեքուի, իւր իրաւունքէն կը զրկուի գործերը երեսի վրայ կը մնան, թշուառութիւնը կաւելնան, և Միսիօնարաց դիտմունք կիրականանան ի վնաս հասարակութեան շահուց. հոգ ընող չկայ, ոչ ազգապետ և ոչ հովիւք կամ քարոզիչք, բաւական է որ իրենք առատ ամսականաւ և անուղղակի պարգևներով հանգիստ և ապահով կեանք կը վարեն, Ահա ընթերցողը կրնայ դատել թէ որ աստիճան է այս ժողովրդեան խեղճութիւնը և թշուառութիւնը:

Հիմա գանք տեսնել Ամերիկեան Միսիօնարաց արդի կացութիւնը. ասոնք Ամերիկեան Պօրտ ընկերութեան առաքեալներն են, և զըրկուած են ի Թուրքիա աստեղի ժողովուրդը Բրիստօնէութեան դարձնելու, կրթելու և բարձրացնելու համար, և աս նպատակին համար ամեն տարի մեծ գումարներ կտանան Պօրտ ընկերութենէն, որն որ 110—125000 ոսկւոյ տարեկան եկամուտին գրեթէ մէկ երրորդ մասը կը զոհէ աս առաքելութեան, բայց մեծ ցաւով կը տեսնենք թէ այս առաքեալներն իրենց բուն սկզբան ծառայելէ խիստ հեռի լինելէ զատ, իրենց գալէն առաջ Թուրքիոյ մէջ արդէն դանդաղ Բրիստօնէութեան կրթութեան և յառաջդիմութեան վնասաբեր եղած են, և այն մեծ գումարները, որ Պօրտ ընկերութենէն կընդունին, արդարև իրենց հաճոյից և եթ զոհ կը լինին մեծաւ մասամբ, այո՛, ազատ խղճիւ և նոյն ժամայն ցաւօք կըսեմք թէ՛ 50 տարիէ հետէ Պօրտ ընկերութեան առաքեալները ի դերև հանած են և իրենց հաճոյից և եթ զոհած են այն մեծ գումարները, որք եթէ բարի նպատակաւ և իմաստութեամբ գործածուէին Թուրքիոյ ժողովրդեան մեծամեծ օգուտներու և շինութեանց միջոց կրնային լինել, և շնորհակալութեան ու երախտագիտութեան վէմ մը հաստատած կը լինէին ամեն Թուրքիացի անհատներու սրտին մէջ. բայց աւա՛ղ, Միսիօնարաց ինքնահաճոյ և քմածին ընթացքը՝ ոչ միայն շնորհակալութեան և երախտագիտութեան վէմ չի հաստատեց Թուրքիացւոց սրտերուն մէջ՝ այլ ընդհակառակն ասելութեամբ և նողկանօք լցուցին նորա սրտերը թէ առ ինքեանս, թէ առ Պօրտ ընկերութիւնն, և թէ առաւել կամ նուազ առ ընդհանուր Ամերիկացիս, որն որ երբէք չպիտի կրնայ բուժել մինչև Պօրտի առաքելոց այս երկրէն ամբողջապէս (խիստ քիչ բացառութեամբ) ետ իրենց

տեղերը քաշուիլը, Այս՝ մեր ժողովուրդը ատելութեամբ և նողկանօք լեցուած է նոցա դէմ, առ Միսիօնարս, ըստ որում սոքա իրենց անձնական հաճոյից և եթէ կը զոհեն ի նպատակ խեղճ հասարակութեան հառաքել գումարները, ուղղակի կամ անուղղակի վնասելով տեղական ժողովրդեան շահերը, առ Պօրտ ընկերութիւնն, ըստ որում անհոգ գտնուած է վայելուչ և արժանաւոր պաշտօնեաներ գտնելու առաքելական պաշտօնին մէջ, և կաշխատի իւր առաքելոց յայտնի սխալմունքները արդարացնելու. առ ընդհանուր Ամերիկացիս որք մինչև ցարդ խաբուած են և աշխատած չեն ինքնակոչ առաքելներուն պատրանքները տեսնել ինչպէս որ իրենք արժան են ուրիշ ամեն բանի մէջ և ճշմարտութեան և արդարութեան ջատագովներն են. բայց տակաւին գիտցած չեն որ իրենց ստակով վարձեալ կարգ մը անձինք յայնկոյս ատլանտեան խեղճ ժողովուրդ մը կը կեղեքեն, խռովութեան և անհաշտութեան սերմեր կը ցանեն նորա մէջ, իրենց վրայ «առաքելք Գրիստոսի» տիտղոսը կրելով, Ասոնց վրայօք աւելի ընդարձակօրէն պիտի խօսինք մեր «Միսիօնարք» վերնագրով յօդուածին մէջ, Հիմա կանցնինք մեր խնդրոյն կարգին տեսնել թէ ինչ է Միսիօնարաց արդի կացութիւնը:

Միսիօնարք իրենց առաքելական պաշտօնը կատարելու համար Թուրքիոյ այլեայլ կեդրոն քաղաքներու մէջ իրենց բնակութիւնը հաստատեցին. և որովհետեւ իրենք տեղական լեզուն չէին գիտէր, ամսականաւ անձինք վարձեցին, և նոցա միջոցաւ սկսան Բողոքական ժողովուրդ մը կազմել՝ այլեայլ միջոցներով, արդարեւ իրենց յարողներուն շատերը հոգւոյ փրկութեան համոզմամբ, և շատերն ալ,—զորս չենք կրնար ուրանալ կենաց հացն իւր նիւթական նշանակութեամբ միայն ընդունեցին, որ մինչև ցայսօր շատեր այսպէս գտնուիլը, և նոյն իսկ հոփուաց և քարողչաց բաղմութիւն մը այս կարգէն լինելը չի կրնար ուրացուիլ: Ըսելու չի ժողովուրդ որ այս վերջինները աւելի կգան Միսիօնարաց գործին:

Միսիօնարք երբ այսպէսով քանի մը հազար ժողովուրդ հաւան իրենց յարող, անմիջապէս Ամերիկա հրատարակեցին թէ իրենց յանձնուած գործը յառաջ կտանին, այնպէս որ խելքէ մօքէ վեր է. և թէ առ այժմ 25—30,000 ի չափ Բողոքական ժողովուրդ մը յառաջ բերած են. և ընդ Սոյն միջոցին այլեայլ մեքենայութիւններով Բողոքական ժողովուրդը իրենց մայրական եկեղեցւոյն դէմ, և Լուսաւորչական ժողովուրդն ալ Բողոքականներուն դէմ գրգռեցին, որ այս դարձուածներով իրենց վերջին նպատակին հասնին: Երբ այս խառնակութեանց մէջ գրեթէ առ ժամանակ մը անկարելի եղաւ երկու ժողովրդոց ի միասին մնալը, Միսիօնարք Հայ—Բողոքական հասարակութեան միտքը ձգեցին որ կրնան իրենց մայրական եկեղեցիէն և Պատրիարքարանի իրաւասութենէն բաժնուելով զատ եկեղեցի և զատ ազգապետ և վար-

չութիւն ունենալ իրենց հոգանաւորութեան ներքեւ, խոստանալով նոյն ժամայն իրենց ամենայն աջակցութիւնը և Եւրոպական ղեկավարաց օգնութիւնը նուիրել գործին յաջողութեան համար։ Այն ժամանակի անփորձ և անխոհեմ Բողոքականաց մի քանին ալ ասկէ իրենց ապագային մեծ առաւելութիւն և հանգստութիւն նշմարելով, հաւանութիւն տուին Միսիօնարաց խրատին, որ վերջապէս գործն ի գլուխ ելաւ ի վնաս և յանպատուութիւն թէ իրենց և թէ Հայ—Ազգութեան։

Ահա հոս էր միսիօնարաց խորամանկութեան և ճշմարտութեան կեդրոնը։ Այս հիմը հաստատելէն վերջը նոքա կրնային նորա վրայ իրենց ուղածին պէս շէնքեր շինել, ինչպէս որ բրին ալ, դորս պիտի աեսնենք։ Այս միջոցիս միսիօնարք անմիջապէս տեղեկագրեր ղրկեցին և հրատարակեցին յԱմերիկա, թէ նոքա ոչ միայն բողոքական ժողովուրդ մը յառաջ բերած են, այլ նաև բողոքական ազգ մը կազմած են զատ Ազգապետով և զատ Վարչութեամբ, և թէ երթալով նա բազմանալով վրայ է, և թէ քիչ ժամանակէն մեծ յոյս կայ որ բոլոր միւս Հայերն ալ լուսաւորուելով, իրենց հոգանաւորութեան տակ եղող սոյննոր Ազգին և եկեղեցւոյն հետ պիտի միանան ևլն։ Ելն։ Այս պարագային մէջ յիշեցուցին նոքա, որ առաջագրեալ նպատակին հասնելու համար զրամի պէտք կայ։ Խեղճ և անգէտ Ամերիկացիներն ալ Միսիօնարաց Էֆօրէնները իրողութիւն կարծելով իրենց առատ նուէրներովը լեցուցին Պօրտ ընկերութեան գանձը, և շուտ մը Թուրքիոյ Միսիօնարաց յատկացեալ գումարներ կրկնապատկեցան, եռապատկեցան, քայց խնդիրը դարձուածք մըն էր միայն, որով միսիօնարք իրենց նպատակին կը հասնէին։ Այս միջոցին Միսիօնարք սկսան աստ և անդ դպրոցներ բանալ, և իրենց Աստուածաբանական դպրոցներէ կրթութիւն առնող պատանիներէ վարժապետներ կանգնել, դպրոցները բարձր և փայլուն պայմաններու տակ կը հրատարակուէին՝ որ արդարև դպրոցասէր անձանց աչքերը կը շլացնէին։ Բայց խնդրոյն կարևորագոյն կէտն է գիտնալ թէ՛ Միսիօնարք իրօք կրթութիւն տարածելո՞ւ և ուսում ուսուցանելու նպատակաւ դպրոցներ կը բանային։—Ոչ։ Միսիօնարաց նպատակը բոլորովին տարբեր էր։ Նոքա կը գիտէին թէ արդեօք ո՞ր բարգաւաճեալ դպրոց մը կայ, հոն կամ նորա մօտերը ուրիշ դպրոց մը կը բանային և աւելի թեթեւ պայմաններով և աւելի շատ ուսում ուսուցանելու խոստմամբ յայտարարութիւններ կտարածէին, զաղտնի նպատակ ունենալով որ սոյն դպրոցը տկարացնեն։ և որովհետև իրենք ամենայն զրամական միջոցներով օժտեալ են, բնականաբար քովի դպրոցը կը տկարանար, մինչև որ բոլորովին փակի (մենք չէինք ուզեր զիտողութիւն մը ընել իթէ այսու ամենայնիւ Միսիօնարք իրենց յայտարարութեանց համեմատ ուսուցանէին) երբ քովի դպրոցը փակի, ան ատեն իրենց յայտարարութիւնք կը փճանան և խոստմունք ալ կանհետանան և արդէն և շատ դպրոցին կիսուն չափ ալ կրթութիւն չեն տար։ Զրենք կրթական

գործին օգուտ մը չընելէ զատ արդէն եղածն ալ կը խափանեն որուն օրինակները չեն պակաս դժբաղդաբար:

Միսիօնարք իրենց հրամանաց ներքեւ բազմաթիւ անձինք ունին, ինչպէս հովիւք, քարոզիչք, վարժապետք և ժողովրդեան մէջէն պլելապլ անձինք անուղղակի վարձեալք: Սորա միշտ ըստ հրամանի նոցա պարտին վարուիլ, եթէ ամենափոքր գիտողութիւն մը ընեն նոցա գործերուն, անմիջապէս կամ վերջապէս իրենց գործերէն կը զրկուին և անգործութեան և աղքատութեան կը դատապարտուին: այսօր որչափ հովիւք, քարոզիչք և վարժապետք անգործութեան և թշուառութեան դատապարտուած են, որոնց պատճառը ուրիշ բան չէ, բայց միայն Միսիօնարաց ընթացքին գիտողութիւն ըրած են, կամ ժողովրդեան ի նպաստ խօսած և նոցա շահը պաշտպանած են, կամ Միսիօնարաց շողորդութիւն ըրած չեն: դարձեալ այսօր որչափ կեղծ և անարժան անձինք Միսիօնարաց գործոց մէջ լինելով լեցուին ամսական և պատիւ կընդունին ի նոցանէ, որոնք սկզբունք և ժողովրդեան շահը պաշտպանելէ հետի, Միսիօնարաց շողորդութիւն և նոցա արարքները դրուատել և եթ գիտեն:

Թիրաւի, այսօր որչափ անարժան և շողորդ անձինք կը գանուին Միսիօնարաց պաշտօններուն մէջ, որք իրենց անձնական շահուն համար հոգ չեն ըներ ժողովրդեան շահը և պատիւը դոքի տակ առնուի, մանաւանդ այս օրերս քանի մը հանրածանօթ հովիւք և քարոզիչք (որոց անունները չենք ուղեր յիշել աստ), որք երբեմն ժողովրդեան զգացման ներկայացուցիչք և նոցա շահուց պաշտպանողք լինելու յաւակնութիւնն ունէին, այժմ Միսիօնարաց կողմն անցած են՝ անոնցմէ առատ ամսական և պատիւ ընդունելով:

Թէ մեր ժողովուրդ ի՞նչպէս պարտի վարուիլ այս յետին կարգի պաշտօնէից հետ, ընդարձակօրէն պիտի խօսինք մեր «Հայ-Բողոքական պաշտօնեայք» վերնագրով յօդուածին մէջ:

Ահա ընթերցողը կրնայ ասկէ փոքրիկ գաղափար մը կազմել Հայ բողոքական հասարակութեան և Միսիօնարաց արգի կացութեանց վրայ: Արդարեւ մեր նպատակը չէր սոցա մի պատմութիւնն ընել, որք եթէ լինին՝ աւելի Միսիօնարաց արարքները դատապարտութիւն պիտի կրեն, և տեղացի բողոքականաց խեղճութիւնը երևան պիտի դայ: Առ այժմ այսչափս բաւական համարելով կանցնինք այն կարեւոր խնդրոյն՝ թէ ի՞նչ պարտի լինել բարւոք և արժանաւոր վարչութիւն մը հաստատելու այս երկու մարմնաց միջեւ:

Այս խնդրոյն համար մենք երկար խորհելով խնամօք և զգուշութեամբ քանի մը ծրագրեր պատրաստած ենք, յուսալով որ նոցա գործադրութեամբ մինչև ցարդ եղած վնասներուն դարման մը կրնայ տարուիլ, որոնք թէև ամբողջովին չենք կրնար հրատարակել, կրնանք մեր ընթերցողաց գաղափար մը տալ նոցա պարունակութեան վրայ:

Նախ՝ իրրե առաջինն և ամենակարեւորն բարեւոք վարչութիւն մը, թէ յօգուտ Աստուծոյ գործոյն և տեղացի ժողովրդեան և թէ ի պատիւ Ամերիկայի նման ազատամիտ ազգութեան։ Միսիօնարաց մի մեծ մասը անմիջապէս ետ իրենց տեղերը զրկուելու են, կամ լաւ ևս իրենց ներկայ պաշտօնէն արտաքսուին, որոնք մինչև ցարդ թէ Աստուծոյ գործոյն և թէ քաղաքակրթութեան օգուտ մը չըլլալէ զատ՝ գալթակղութեան և նողկանաց պատճառ եղած են այն ժողովրդեան մէջ, ուր իրենք կրնակին։ այո՛, անոնց արտաքսումը ամենակարեւորն, բարեկարգութեան առաջին քայլն և ամեն պայմանաց առաջին և վերջին կէտն է։ մենք չենք խորշիր անոնց մի քանիին անուանքը յիշել աստ, որոց այս երկրէն և այս գործէն բաժնուիլը բարեկարգութեան առաջին նշանն է և հաշտութիւն ընդ մէջ Հայ—Բողոքական հասարակութեան և Միսիօնարաց, այն ատեն խնդրոց միւս բոլոր ճիւղերուն մէջ շուտով բարեկարգութիւն յառաջ պիտի գայ, և Ամերիկեան լումաները մեծապէս պիտի օգտեն խեղճ և տառապեալ Հայ ազգութեան։ մենք այս պայմանին անհրաժեշտ գործադրութեան համար կը խրատենք մեր ազգայինս որ լաւ ըմբռնեն զայս կէտ, և պարտին համարել զնա իրրե ամեն իրենց ամենակարեւոր պայմաններէն։ Արդ կգանք այժմ յիշել մի քանին այն միսիօնարներէն որոց անուանք յիշուիլ թէ և իրենց հաճելի չգար, բայց ալ պէտք է գիտնան՝ որ ալ չենք կրնար անձնականի համար ժողովրդական արդար գառը ոտքի տակ առնել։ այո՛, միայն քանի մը անձերու շահուն և հաճոյից համար բազմաթիւ տարիներէ հետէ մեր ժողովուրդ կհեծէ, ալ չենք կրնար համբերել նոցա։ պիտի հրատարակենք նոցա պատճառ եղողները, որոցմէ պիտի ազատինք միայն և միայն երբ նոքա այս սուրբ առաքելական գործէն բաժնուին։

Այս Միսիօնարաց կարգէն են՝ Թուրքիոյ Միսիօնարաց ընդհանուր տեսուչ Տօքթ. Աուտ (???) Տօքթ. Հուիլըր, Մր. Պօլտուին, Մր. Հէրրէք, Մր. Բիրս, Մր. Քրիսդիր, Մր. Մարտին, Մր. Թրօպըրիճ, Մր. Բարմէլի (?) Մր. Հուիլըր (?) և այլն ասոնց նման շատեր։

Այս Միսիօնարք իրենց առաքելական գործէն հեռացնելէն վերջը՝ հոս մնացողներուն վրայ պէտք է լաւ քննարկ զնել, և մեծապէս բարեփոխել այն ծրագիրը, որ մինչև ցարդ իրենց գործողութեան ասպարէզն եղած էր։ ասոր հետ ի միասին տեղացի արժանաւոր հովիւք, և վարժապետք ինչպէս նաև արժանաւոր ժողովուրդներէն իրենց գործակից և խորհրդակից ընել, և քստ այնմ անօրինել կրթական, տպագրչական, և առաքելական գործերն։

Բայց կատարեալ և տեական բարեկարգութիւն ձեռք բերելու համար, այժմ աւելի փորձառութեամբ կը խորհինք որ վերոյիշեալ ծրագիրն բաւական չէ բարեւոք և հաստատուն վարչութեան մը գոյութեան։

Արդարեւ այս և ասոր նման ծրագրաց գործադրութիւնը կրնայ առ ժամանակ մը հաշտութեան և խաղաղութեան միջոց լինել երկու մարմ-

նոց մէջ, բայց մինչև հողմ մը և անձրև մը տեղալը, քանզի տունը աւազի վրայ շինուած լինելուն այսպիսի միջադէպ մը կարենայ իւր կործանման նշանը տալ:

Մաշողական աստէ բռնուած անձի մը մի քանի տեսանելի վերքերը բժշկելով ամբողջ հիւանդութիւնը բժշկած չենք լինիր, եթէ մի կողմէն վերք մը բժշկուի, միւս կողմէն երկու հատ կելնէ, ինչու որ ամբողջ մարմինը թունաւորուած է, կատարեալ բժշկութիւն ձեռք բերելու համար, ամբողջ մարմինը բժշկութեան ենթարկել պէտք է:

Չենք կրնար մի քանի Միսիօնարներ միայն հեռացնելով բարեկարգութիւն հաստատած ըլլալ: Այո՛, այժմու Միսիօնարաց մէջ չեն գրտնուիր կամ խիստ քիչ կը գտնուին բարեսէր Ամերիկացի ոց զիտումներուն և Պօրտ ընկերութեան նպատակներուն համապատասխանողք:

Վե՛հ Ամերիկացի ոց զիտմանց և Պօրտ ընկերութեան նպատակներուն հասնելու համար, ոչ թէ Միսիօնարաց մի մասն միայն պաշտօնանկ լինելու են, այլ այս ինքնակոչ առաքեալներուն բոլորն ալ խիստ քիչ բացառութեամբ (խօսքերնիս միայն Հայ—Բողոքական հասարակութեան մէջ գտնուող Միսիօնարաց համար է) հնար եղածին չափ շուտ պաշտօնանկ ընելով ետ իրենց տեղերը ճամբուելու են. այո՛, դարձեալ և դարձեալ կը կրկնենք թէ առանց ասոր անհնար է այն վե՛հ Ազգին և ընկերութեան նպատակներուն իրականացման, Թո՛ղ տեսնեն, տեսէք ո՞վ վե՛հ Ամերիկացիք, ոչ խօսքով այլ գործքով, քննեցէք ո՛ւր է ձեր այս չափ տարւոյ միլիօնաւոր թալէոներու պտուղները, ի՞նչ բարիք յառաջ բերած են ձեր առաքեալներն անոնցմով յայնկոյս ատլանդեան. քրննեցէք և տեսէք միթէ ձեր լուծմաները նոցա փառաց և ինքնահաճութեան զո՛հ գացած չե՛ն, Ո՞ր Հայուն սրտին մէջ շնորհակալութեան և երախտագիտութեան վէ՛մ գրին նոցա անուս մանկունքներուն ուսում ուսուցանելով և քաղաքակրթութեան լուսոյն տեղեակ ընելով. և ասոնք չըլլալէն զատ, ո՞ր զգայուն Հայուն ձաղկանաց և ատելութեան պատճառ չեղան. բաց ի նոցանէ որք իրենց ուղղակի կամ անուղղակի շահագիտական յարաբերութիւն ունին, որք բնականաբար իսէր զրամոց նոցա կողմը պիտի բռնեն:

Արդ կը վերջացնեմք այժմ մեր գրութիւնը խոստանալով գրել պարբերաբար հետեւեալ վերնադրաց ներքև որք են. « Միսիօնարք » « Հայ—Բողոքական պաշտօնեայք » « Ամերիկեան քննիչ յանձնաժողովն » « Խնդիր գործակցութեան Հայ—Բողոքական պաշտօնէից ընդ Միսիօնարս » « Պօրտ ընկերութեան գործադիր ժողովն » ևլն. ևլն:

Մենք որոշած եմք առ այժմ ծածկել մեր անուն, անձնական խնդրոց և վէճի տեղի չի տալու համար. մեր խնդիրն երբէք անձնական խնդիր չէ, այլ սկզբունքի խնդիր է. Քանզի ինչպէս յայտնի է՝ Միսիօնարք երբէք խիղճ չեն ընել ձեռքերնուն եկածին չափ ամեն շարիքներ հասցընել իրենց դէ՛մ գրող հեղինակի մը (թէև այս տողերը գրողը ամենեւին

վախ չունի նոցա ահարկու բայց սնամէջ սպառնալիքներէն) բայց ի պահանջել հարկին կրնայ ոչ թէ միայն իւր անունը, այլև իւր անձը տալ ի սէր ճշմարտութեան:

Մենք կը փափաքինք որ մեր գրութիւնները Միսիօնարաց վրայ՝ սխալ բլլան: Բայց Միսիօնարաց մինչև ցարդ այս և ասոր նման բազմաթիւ գրութեանց դէմ լուելը և միայն կարծեցեալ հեղինակի մը խիստ և ծանրը սպառնալիքներ ևեթ ընելով բաւականանալը *), զժբաղդարար կը վկայէ որ իրենց վրայօք գրուած ամբաստանութիւնք իրողութիւններ են: այսու ամենայնիւ մենք դարձեալ կը հրաւիրենք զպատուելի Միսիօնարս որ պատասխանեն իրենց դէմ եղած գրութեանց, եթէ կը կարծեն որ չափազանցութիւն և սխալ են: Բայց մենք կը հարծենք որ Միսիօնարաց իրենց դէմ եղած գրութեանց չպատասխանելը ոչ այլ ինչ է, բայց միայն այն գրութեանց ճիշդ և ճշմարիտ իրողութեանց պատկերը լինելը՝ որք չեն կրնար հերքուիլ, ինչպէս որ երկու, երկու ալ չորս կընեն չկըրնար հերքուիլ:

Այս պարագայիս մէջ Միսիօնարաց համար աւելի աղէկ ճանբայ չկրնար գտնուիլ, բայց միայն եղած անցած բանները չգիտնալու զարնել:

Հ-յ-Ա-Ե-Գ-Բ-Ն-Է-Ն

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՐԻՍՏԱԿԷՍԷԱՆ:

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ.

Շամախու Ա. Սանդխտեան օրիորդական Հոգ. դպրոցի հոգաբարձութիւնը ինդրումէ տպագրել հետեւեալ հաշիւը:

1882 թ. առ մինն Յունվարի մնացեալ էր ուսումնարանապատկան մայր գումար սուրբ Սանդխ. օրի. ուսումնարանին Շամախույ ութ հարիւր չորս ուսու. երկու կոպ. (804 ուսու. 2 կոպ.):

1882 թ. --ԵԼ-Գ-Բ-Ն-Է-Ն:

Ստացուեց քսան և ութ անդամներից տուրք, իւրաքանչիւր տասնական ուսուրի.	280
» երկու անփոփոխ անդամներից տուրք.	200
» Վեց խնամակալուհիներից.	35
» Գոյացած նուէրներից և հանգանակութիւնից.	102-50
» Թոշակադրամ աշակերտուհիներից.	167-30
» Տոկոսադրամ ուսումնարանապատկան մայր գումարի.	200

(*) Ահանջը կոնչէ Տօղթ. Վուտ Միսիօնարապետին և Յ. Արիստակէսեանին: